

ԵԳՊԱ SWOT վերլուծություն

1. Ինստիտուցիոնալ ռազմավարություն/Institutional strategies

Բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհ) հետազոտության ոլորտի ռազմավարությունը համահունչ է բուհի առաքելությանը և նպատակներին:

ՈՒԺԵՂԿՈՂՄԵՐ

ԹՈՒՅԼԿՈՂՄԵՐ

1. Հետազոտությունը ներառված է բուհի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրում որպես առանձին նպատակ:
2. Հետազոտողի կրթական ծրագրի մշակումը սահմանված է բուհի առաքելության մեջ:
3. Ստեղծվել է հետազոտական կենտրոն, որի գործունեությունը բխում է ինչպես բուհի ռազմավարական ծրագրի նպատակներից, այնպես էլ Վերիտաս ծրագրի պահանջներից: Կենտրոնի իրականացրած աշխատանքների թվում ամենակարևոր ձեռքբերումներն ու գործառույթներն են.
 - հետազոտության մանրամասն եւ թիրախավորված ռազմավարության մշակումը՝ հաշվի առնելով բուհի մարդկային եւ նյութական ռեսուրսները, արվեստի հետազոտության ոլորտում արդի իրավիճակը, արդիական խնդիրները, զարգացման միտումները եւ մրցակցություն ապահովող ոլորտներն ու թեմաները:
 - բուհում ընթացող հետազոտական աշխատանքների կենտրոնացումը, համակարգումը եւ վերահսկումը:
 - հետբուհական (ասպիրանտական) հետազոտական կրթության ծրագրի եւ ուսումնական պլանի մշակումը, համակարգումը եւ վերահսկումը:

1. Հետազոտության ոլորտի զարգացման եւ հետազոտական աշխատանքների կատարման, կոորդինացման համար բուհը չունի բյուջեով հստակ սահմանված անվանական տոկոսային մասնաբաժին, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեք իրականացնել աշխատանքների պլանավորումը եւ կատարումը:

<p>2. Կենտրոնի աշխատանքները տարեկան կտրվածքով <u>պլանավորված են</u>, կատարվում է եռամսյակային եւ տարեկան <u>հաշվետվություն</u>, ինչն ապահովում է աշխատանքների մշտադիտարկումը եւ գնահատումը:</p> <p>3. Բուհի հնգամյա ռազմավարական ծրագրի ժամկետները լրացել են, մշակվող նոր ծրագրի մեջ, հիմնվելով կատարված աշխատանքի եւ նախանշված նոր միտումների վրա, ավելի լայն եւ թիրախավորված կներկայացվեն հետազոտության ոլորտի խնդիրները:</p>	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<p>1. Օգտագործել օտարերկրյա միջազգային ծրագրերի եւ ֆինանսավորումների ընձեռնած հնարավորությունները՝ նոր ռազմավարական ծրագրի մշակման համար:</p>	<p>Թույլ կողմերի խնդիրները չլուծելու դեպքում մշակված ռազմավարությունը, հետազոտության ուղղությունները, պլանները, հնարավորությունների օգտագործումը մեծամասամբ կմնան թղթի վրա:</p>
<p><i>Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները</i></p> <p>Բուհի տարեկան բյուջեում անվանական տոկոսային մաս սահմանել՝ հետազոտության ոլորտի համար:</p>	
<p><i>Առաջարկություններ տիրույթում խնդիրների բարելավման ուղղությամբ</i></p>	

2. Հետազոտողի մասնագիտության կրթական ծրագրեր /Doctoral Program

Հետազոտողի մասնագիտության կրթական ծրագրերի նպատակները համահունչ են բուհի հետազոտության ոլորտի ռազմավարությանը, կազմում են հաստատության պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս և մշակված են հաղթահարելու գլոբալ աշխատաշուկայի նոր մարտահրավերներն ու կարիքները:

ՈՒԺԵՂԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼԿՈՂՄԵՐ
<p>1. Հետազոտողի մասնագիտության կրթական ծրագրի նպատակները բխում են հետազոտական կենտրոնի սահմանած ռազմավարական նպատակներից, որոնք էլ իրենց հերթին մշակված են բուհի նպատակների և առաքելության շրջանակներում:</p> <p>2. Ծրագրի մշակման գործընթացը և կիրառումը իրականացնում են երկու կառույց՝ <u>հետազոտական կենտրոնը և գիտական մասը</u>:</p> <p>3. Հետազոտողի կրթական ծրագրի մշակումը ներառված է հետազոտական կենտրոնի և գիտական մասի տարեկան աշխատանքային պլանում, որտեղ սահմանված են նաև աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները:</p> <p>4. Վերիտաս ծրագրի շրջանակներում մշակվող հետազոտողի կրթական նոր ծրագիրը Հայաստանում <u>առաջին անգամ</u> ներկայացնելու է կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի գծով ասպիրանտական կրթության բովանդակային առաջարկ, որտեղ ընդգրկված են ընդունելության, թեզի կատարման և պաշտպանության վերաբերյալ նոր պահանջներ:</p> <ul style="list-style-type: none"> • Առաջարկվող ծրագիրն առավել համահունչ է բուհում տրվող մասնագիտական պատրաստվածության որակավորումներին, այսինքն՝ ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների գծով թեզը ներկայացնում է ոչ թե արվեստաբանության դասական հետազոտություն, այլ <u>ստեղծագործական նախագծի առաջարկ</u> և այդ նախագծի շուրջ կատարված <u>հետազոտական գրավոր աշխատանք՝ ավարտագիր</u>: • նոր ծրագիրը մշակվել է արվեստի հետազոտության ոլորտում միջազգային փորձի և այսօրվա կիրառության ուսումնասիրության հիման վրա, ինչը համահունչ է գլոբալ աշխատաշուկայի մարտահրավերներին և հնարավորություն է տալիս բարձրացնել բուհում արվեստի հետազոտության 	<p>Առաջարկվող ասպիրանտական ծրագիրը բոլորովին նոր երևույթ է Հայաստանի իրականության մեջ, սկզբնական շրջանում բավական դժվար է լինելու և կազմակերպումը, և թեզի պատրաստումը, և պաշտպանության գործընթացը:</p>

մրցունակության աստիճանը:

- Բուհի ստեղծագործական ամբիոնները մասնակցել են ասպիրանտական ծրագրի համար հետազոտական ուղղությունների որոշման աշխատանքներին՝ այդպիսով առավել արդյունավետ դարձնելով ծրագրի նպատակների եւ բուհի մասնագիտական ռեսուրսների համապատասխանությունը:
- Նոր ծրագիրը լուրջ հայտ է՝ հիմնավորապես բարենորոգելու արվեստի ոլորտում կատարվող հետազոտական աշխատանքը եւ որակյալ կադրերի պատրաստման խնդիրը:
- Ընդունման դեպքում ծրագիրը կարող է հիմք ծառայել արվեստի այլ ոլորտների բուհերում հետազոտական կրթական ծրագրի բարեփոխման համար:

5. Հետազոտողի մշակվող ծրագիրը բարելավում է նաեւ արվեստի պատմության եւ տեսության ոլորտի ասպիրանտական կրթության գործընթացը, մասնավորապես՝ փոխվում են ընդունելության պայմանները, ղեկավարության սկզբունքները, ասպիրանտ-ղեկավար համագործակցությունը, ընդունելության եւ պաշտպանության պայմաններն ու չափանիշները:

6. Ծրագրի հետազոտական թեմաները թիրախավորված եւ նախանշված են եւ.

համապատասխանում են բուհի հետազոտության ռազմավարությանը եւ հետազոտական կենտրոնի մշակած հետազոտության ուղղություններին,

որոնցում հաշվի են առնված արվեստի հետազոտության ոլորտում առկա այժմեական խնդիրները, չուսումնասիրված ոլորտները, արդիականությունը՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային

<p>համատեքստում: Թիրախավորված հետազոտական ուղղությունների սահմանումը հնարավորություն է տալիս որակյալ կադրեր պատրաստել հենց նախանշված թեմաների եւ ոլորտների շրջանակներում՝ միջազգային մակարդակով, ինչն էլ կօգնի ապահովել մրցունակությունը գլոբալ աշխատաշուկայում:</p> <p>7. Նոր ծրագրերի մշակումն ու իրականացումը՝ ըստ եւրոպական ասպիրանտական կրթության տեսլականի եւ համակարգի, հնարավորություն կտա ապահովել ասպիրանտ-ուսանողների փոխադրվելու հնարավորությունը եւ կազմակերպել համատեղ ղեկավարություններ կամ համատեղ ասպիրանտական ծրագրեր:</p> <p>8. Ծրագրի ուսումնական պլանը տեւում է երեք կիսամյակ եւ ընդգրկում է միջազգային պրակտիկային եւ չափանիշներին համապատասխանող, թրիախավորված եւ ճկուն մոդուլներ/դասընթացներ:</p> <p>9. Նոր ծրագիրը մշակված է ըստ <u>ուսանողակենտրոն մոտեցման</u>:</p>	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
	<p>Կրթության եւ գիտության նախարարությունը կարող է չընդունել առաջարկվող պիլոտ ծրագիրը՝ կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի գծով, որովհետեւ այն համակարգային փոփոխություն է նախատեսում:</p>
<p><i>Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները</i></p> <p>Պիլոտ ծրագրի մշակման աշխատանքային խումբը արվեստի հետազոտական-կատարողական ոլորտի համար առաջարկվող նոր ծրագրի ընդունման համար մշտական բանակցությունների մեջ է ԲՈՀ-ի եւ ԿԳ նախարարության կողմից Վերիտաս ծրագրի մասնակից անդամների հետ:</p>	

Առաջարկություններ տիրույթում խնդիրների բարելավման ուղղությամբ

3. Ընդունելության քաղաքականություն /AdmissionPolicy

Հետազոտողի մասնագիտության կրթական ծրագրով բուհի ընդունելության քաղաքականությունը թափանցիկ է, համահունչ ծրագրի նպատակներին:

ՈՒԺԵՂԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼԿՈՂՄԵՐ
<p>1. Նոր ծրագրով մշակվել է <u>ընդունելության նոր կարգ</u>, որը տարբեր է արվեստի պատմության եւ տեսության եւ ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների գծով դիմորդների համար: Այն լավագույնս է արտահայտում ծրագրի նպատակները, թիրախավորված է եւ թույլ է տալիս առավել արդյունավետ կերպով ապահովել ընթացակարգի թափանցիկությունը եւ թեկնածուների ճիշտ ընտրությունը:</p> <p>2.Ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների գծով ընդունելության նոր կարգը նախատեսում է.</p> <ul style="list-style-type: none"> մասնագիտական քննության փոխարեն դիմորդը պետք է ներկայացնի հետազոտության ստեղծագործական-կատարողական <u>նախագծի կոնցեպտը</u>, որտեղ պետք է արտահայտված լինեն՝ հետազոտության բուն թեման եւ գաղափարը, դրա գեղարվեստական-պատմական 	

համատեքստը եւ հիմնավորումը, գեղարվեստական լուծման տարբերակները, հորինվածքային, ոճական եւ նյութատեխնիկական արտահայտչամիջոցները:

- Վերջին շրջանում կատարած աշխատանքների պորտֆոլիո եւ, եթե առկա է, մասնակցած ցուցահանդեսի/ների մասին տեղեկատվություն, լուսանկարներ
- Փաստաթղթերի փաթեթ՝ որակավորման վերջին դիպլոմով
- Երաշխավորագիր՝ տվյալ բնագավառում ճանաչված մասնագետի անունից (երաշխավորագիրը պետք է էլեկտրոնային փոստով ուղարկվի ուղղակիորեն գիտական քարտուղարին)
- Հարցազրույց, որտեղ պետք է ստուգվեն դիմորդի՝ հետազոտություն անելու մոտիվացիան եւ կարողությունները, իր առաջարկած նախագծի հետազոտության խնդիրների շուրջ իր պատկերացումները:

3. Արվեստի պատմության եւ տեսության մասնագիտության գծով ընդունելության նոր կարգը նախատեսում է.

- մասնագիտական քննության փոխարեն դիմորդը պետք է հակիրճ ներկայացնի հետազոտության թեմայի առաջարկ-նկարագրություն, որում արտահայտված կլինեն՝ ուսումնասիրվող խնդիրը, հետազոտական խնդիրը եւ այն կատարելու ընդհանուր մեթոդն ու եղանակները:
- առնվազն մեկ հրապարակած աշխատանք՝ ստուգելու համար նրա հետազոտություն կատարելու ունակությունները (բացակայության դեպքում՝ մագիստրոսական թեզի համառոտագիր),

- մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները,
- Երաշխավորագիր՝ տվյալ բնագավառում ճանաչված մասնագետի անունից (երաշխավորագիրը պետք է էլեկտրոնային փոստով ուղարկվի ուղղակիորեն գիտական քարտուղարին)
- Հարցազրույց, որտեղ դիմորդը կցուցաբերի արվեստի պատմության վերաբերյալ ընդհանուր եւ իր թեմայի շուրջ կոնկրետ գիտելիքներ, մտքերը բանավոր ձևակերպելու կարողություն, արվեստի բնագավառում հետազոտություն կատարելու շուրջ պատկերացում:

4. Ընդունելության գործընթացն իրականացվում է երեք հոգուց բաղկացած մասնագիտական հանձնաժողովի հետ:

5. Ընդունելության թափանցիկությունն ապահովելու համար հանձնաժողովի անդամները պետք է կազմեն յուրաքանչյուր թեկնածուի համար մեկ էջանոց կարծիք-տեղեկագիր, որտեղ շարադրված կլինեն ընդունելության համար ներկայացված պահանջների բավարարման մասին գնահատող եզրակացություններ՝ ըստ սահմանված չափանիշների:

6. Ընդունելությունից հետո երեք ամսվա ընթացքում դիմորդի թեման հաստատվում է գիտխորհրդի կողմից, բայց այս դեպքում գիտխորհրդի հաստատումը կունենա արդեն խորհրդատվության կարեւոր նշանակություն:

- Հաստատման համար ասպիրանտը պետք է ներկայացնի արդեն իսկ իր թեմայի վերջնական վերնագիրը, կառուցվածքը, աշխատանքային պլանը, սկզբնական մատենագիտական

<p>ցանկը:</p> <ul style="list-style-type: none"> • Նախքան ասպիրանտուրա ընդունվելը թեմայի շուրջ կողմնորոշումը հնարավորություն կտա բավական ժամանակ շահել՝ այդ ժամանակն օգտագործելով արդեն թիրախավորված եւ ուղղորդված հետազոտական աշխատանքը սկսելու վրա: • Առաջին երեք ամիսը պետք կզան՝ առավել հստակ պատկերացնելու կատարվելիք հետազոտության բովանդակությունը, ուղիները, գիտական խնդիրը, հնարավորություն կտան վերջնական մշակման ենթարկելու վերնագիրը, հիմնական բաժինները՝ արդեն աշխատելով դեկավարի հետ: 	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
	<ol style="list-style-type: none"> 1. Նախարարությունը կարող է ընդունելության միասնական կարգ հաստատել, որտեղ ընդգրկված չլինեն մեր առաջարկները: 2. Ընդունելության տեղերի սահմանափակում նախարարության կողմից 3. Տարկետման իրավունքի արտոնություն
<p><i>Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները</i></p> <p>Վերիտաս ծրագրի շրջանակներում քննարկումներ են գնում՝ ընդունելության գործընթացի պայմանները բուհերի հայեցողությանը թողնելու համար, փորձ է արվում հիմնավորել դա:</p>	
<p><i>Առաջարկություններ տիրույթում խնդիրների բարելավման ուղղությամբ</i></p>	

4. Ղեկավար/Supervisor

Հետազոտողի մասնագիտության կրթական ծրագրի նպատակներն իրականացնելու համար բուհը ապահովված է մասնագիտական բարձր որակներ ունեցող ղեկավարներներով կամ ղեկավարների կազմավորված խմբով:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<p>1. Նոր ծրագրով սահմանված է ղեկավարի աշխատանքի, ղեկավարի եւ ասպիրանտի համատեղ աշխատանքի կանոնակարգված, թափանցիկ ու մշտադիտարկելի մեխանիզմ:</p> <p>3. Մեկ հետազոտող ուսանողի համար նշանակվում է երկու ղեկավար՝ հիմնական եւ ընթացիկ, որոնց աշխատանքային պարտականությունները հստակ սահմանված են:</p> <p>3. Կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի բնագավառների դեպքում ղեկավարներից մեկը պետք է լինի արվեստաբան, մյուսը՝ արվեստագետ, որոնք պատասխանատու են՝ առաջինը՝ թեզի հետազոտական-տեսական մասի եւ ավարտագրի, երկրորդը՝ ստեղծագործական-կատարողական մասի համար:</p> <p>4. Նոր ծրագրում բացի ասպիրանտի տարեկան հաշվետվությունից, լինելու է նաեւ ղեկավարի հաշվետվություն եւ գնահատում/կարծիք:</p>	<p>1. Թեկնածուական թեզերի ղեկավարության իրավունք ունեցող կադրերի պակաս կա բուհում:</p> <p>2. Ղեկավարության իրավունքը շնորհում է ԲՈՀը եւ ոչ՝ ԲՈՒՀը:</p> <p>3. Ղեկավարության իրավունք ստանալու համար ԲՈՀի ներկայացրած պահանջները անհամաչափ են եւ խոչընդոտում են ղեկավարության համար կադրային քաղաքականության իրականացումը:</p> <p>4. Ղեկավարին ներկայացվող պահանջները ձեւակերպված չեն:</p> <p>5. Ընթացիկ աշխատանքի մշտադիտարկման մեխանիզմները բացակայում են:</p>
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ

<p>1. Բուհը չի խոչընդոտում, որ ղեկավարները ընտրվեն այլ, արտաքին հաստատություններից:</p> <p>2. Օգտագործել միջազգային ծրագրերի տված հնարավորությունը՝ ղեկավարների արտաքին վերապատրաստման համար:</p>	<p>Ղեկավարության իրավունքի համար սահմանված անհամաչափ պահանջների պատճառով ղեկավարության թույլտվության խոչընդոտը, որ խիստ նվազեցնում է ղեկավարներ ունենալու հնարավորությունը, կարող է նվազեցնել հետազոտական կրթության դիմորդների քանակը եւ մոտիվացիան:</p>
<p><i>Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները</i></p> <p>1. Նոր ծրագրով նախատեսվում է եռակողմ պայմանագիր՝ ուսանողի, բուհի եւ ղեկավարի միջեւ, որտեղ հստակ սահմանվում են յուրաքանչյուր կողմի իրավունքներն ու պարտականությունները:</p> <p>2. Վերհտասի շրջանակներում նախատեսվում է ղեկավարի ուղեցույցի մշակում եւ տեղայնացում:</p> <p>3. Հարկավոր է բուհում եղած կադրերին աջակցել՝ ղեկավարության իրավունք ձեռք բերելու համար:</p>	
<p><i>Առաջարկություններ տիրույթում խնդիրների բարելավման ուղղությամբ</i></p>	

<p>5. Հետազոտական միջավայր / Research Environment</p> <p>Բուհը նպաստում է որակյալ հետազոտություն իրականացնելուն՝ ձևավորելով հետազոտության համար բարենպաստ միջավայր:</p>	
<p>ՈՒԺԵՂԿՈՂՄԵՐ</p>	<p>ԹՈՒՅԼԿՈՂՄԵՐ</p>

<p>1. Հետազոտական կրթական ծրագրի իրականացման համար բացի տեսական ամբիոնից եւ գիտական մասից, ստեղծվել է նաեւ հետազոտական կենտրոն:</p> <p>2. Նորաստեղծ կենտրոնը կազմակերպում է հետազոտության ոլորտում միջոցառումներ՝ զեկուցումներ, քննարկումներ, հրավիրյալ դասախոսություններ, հանդիպումներ, այդ թվում՝ ասպիրանտների թեմաների շուրջ շնորհանդեսներ եւ քննարկումներ:</p> <p>3. Աջակցում է ասպիրանտներին՝ տարբեր տիպի խորհրդատվությամբ:</p> <p>4. Կապեր է հաստատում տեղական եւ արտասահմանյան գործընկերների հետ՝ համատեղ ծրագրեր կամ համատեղ ղեկավարություն իրականացնելու ուղղությամբ:</p> <p>5. Հետազոտական աշխատանքի համար դասախոսների ծանրաբեռնվածության մեջ ընդգրկվում է առանձին ժամաքանակ:</p> <p>6. Հրատարակվում է ԵԳՊԱ Տարեգիրք գրախոսվող պարբերականը:</p> <p>7. Կենտրոնը ֆինանսական արտաքին աղբյուր է գտել՝ Տարեգրքի ֆինանսավորման համար:</p>	<p>1. Հետազոտական ոլորտի զարգացման համար անբավարար են՝ բուհում գոյություն ունեցող միջավայրը, գրադարանը, նյութա-տեխնիկական հագեցվածությունը:</p> <p>2. Գրադարանի գործող համակարգը չի նպաստում հետազոտական միջավայրի բարելավմանը.</p> <ul style="list-style-type: none"> • աշխատանքային գրաֆիկը թույլ չի տալիս օբյեկտիվորեն օգտվել գրադարանում աշխատելու հնարավորությունից: • ֆոնդերի եւ արխիվի հասանելիությունը խիստ թերի է, • քարտարանը սխալ է կազմակերպված եւ չի համապատասխանում հետազոտական գրադարանների պահանջներին, թույլ չի տալիս նպատակային որոնում կատարել ու գտնել փնտրվող գրականությունը, ինչպես նաեւ՝ պատկերացում կազմել գրադարանի ֆոնդերի մասին: • ընթերցասարահի տարածքն անբավարար է՝ նորմալ պայմաններում աշխատելու համար: <p>2. Հետազոտական կենտրոնի համար հատկացված տարածքը բավարար չէ որակյալ արդյունք տալու համար:</p> <p>3. Կենտրոնը կարիք ունի մարդկային ռեսուրսների:</p>
<p>ՀՆԱՐՄՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	<p>ՎՏԱՆԳՆԵՐ</p>

1. Դիմել այլ միջազգային դրամաշնորհների՝ հետազոտական միջավայրը բարելավելու համար:
2. Կապեր հաստատել եւ համագործակցություն կազմակերպել արվեստի այլ հաստատությունների հետ:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. Կենտրոնի կազմում պետք է ընդգրկել եւս մեկ աշխատող, մեկ հոգին չի կարող աշխատանքի ամբողջ ծանրաբեռնվածությունը արդյունավետ իրականացնել՝ մանավանդ նոր հիմնադրված կառուցվածքը զարգացնելիս:
2. Կենտրոնի ընդլայնված աշխատանքների համար հատկացվելու է լրացուցիչ տարածք, որտեղ կկազմակերպվեն կենտրոնի միջոցառումները, կկայանան ասպիրանտների եւ ղեկավարների հանդիպումները, կգումարվեն կենտրոնի ժողովները եւ կկարողանան աշխատել ու կենտրոնի թվային գրադարանից օգտվել ուսանողները, ասպիրանտներն ու դասախոսները:
3. Փոխել գրադարանի աշխատանքային գրաֆիկը՝ օրը երկարացնելով մինչեւ ժամը 18.00, կազմել առնվազն համակարգված կատալոգի թվայնացված տարբերակը, գրադարանի աշխատակազմին ուղարկել վերապատրաստման՝ արվեստի եւ հետազոտության գրադարանում աշխատելու նոր մեթոդներին եւ պայմաններին, ծանոթանալու համար:
4. Արտաքին դրամաշնորհային միջոցներ գտնել՝ գրադարանի թվայնացման գործընթացը ճիշտ կազմակերպելու համար:
5. Կենտրոնը եւ գրադարանը կվերազինվեն նոր համակարգչային տեխնիկայով:
6. Կենտրոնում կգործի հետազոտական էլեկտրոնային գրադարան:

Առաջարկություններ տիրույթում խնդիրների բարելավման ուղղությամբ

6. Ասպիրանտներ/ Doctoral Candidates

Ասպիրանտները ճանաչվում են որպես համապատասխան իրավունքներով օժտված մասնագետներ:

ՈՒԺԵՂԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼԿՈՂՄԵՐ
<ol style="list-style-type: none"> 1. Ասպիրանտի իրավունքները՝ որպես երիտասարդ հետազոտող, ամրագրված են բուհի եւ վերջինիս միջեւ կնքված պայմանագրով: 2. Նոր ծրագիրը կառուցված է ասպիրանտին որպես երիտասարդ ինքնուրույն հետազոտող դիտարկելու սկզբունքի հիման վրա: 3. Նոր ծրագրի ուսումնական պլանը կազմված է՝ հաշվի առնելով ասպիրանտի՝ որպես երիտասարդ հետազոտողի պահանջներն ու կարիքները: Այնտեղ ընդգրկված են առարկաներ/դասընթացներ, որոնք կոչված են զարգացնելու ասպիրանտի հետազոտական, դասախոսական եւ ղեկավարական ունակությունները: 4. Նոր ծրագրում ասպիրանտ-ղեկավար հարաբերությունները կառուցված են ոչ թե ուսանող-դասախոս, այլ՝ ավագ մասնագետ-երիտասարդ հետազոտող սկզբունքի հիման վրա: 5. Ղեկավարին ներկայացվող պահանջների մեջ խրախուսվում է ասպիրանտի հանդեպ «ոչ թե ընկեր, այլ ընկերական» սկզբունքը: 6. Բուհը խրախուսում է ասպիրանտներին դասաժամերի տրամադրումը՝ պահանջված նվազագույնից ավել ժամաքանակով: 7. Ասպիրանտը ցանկացած պահի, անհրաժեշտության դեպքում խորհրդատվության եւ աջակցության համար կարող է դիմել հետազոտական կենտրոն եւ գիտական մաս: 	<ol style="list-style-type: none"> 1. Ցանկացած բարեփոխման իրականացման ընթացքում ամենադժվարը մարդկանց գիտակցությունը եւ հաստատված սովորույթները փոփոխության ենթարկելն է, մանավանդ՝ երբ գործ ունենք ավագ, կայացած ու ճանաչում ունեցող սերնդի ներկայացուցիչ ղեկավարների հետ:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<p><i>Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները</i></p> <ol style="list-style-type: none"> 1. Հրատարակվելու է ասպիրանտական կրթության ուղեցույց, որտեղ հստակ ներկայացված կլինեն ասպիրանտի իրավունքները եւ պարտականությունները, ինչպես նաեւ կարգավորված կլինեն ասպիրանտ-ղեկավար հարաբերությունները: 2. Մինչեւ ծրագրի գործարկումը նախատեսվում է խորհրդատվական հանդիպումներ կազմակերպել ծրագրին առնչվող մասնագետների եւ ղեկավարների հետ: 3. Ներգրավել բուհի ղեկավարության հեղինակությունը՝ նոր ծրագիրն ընդունելու եւ կյանքի կոչելու համար: 	

7. Միջազգայնացում/Internationalization

Միջազգայնացումը համահունչ է բուհի հետազոտության ոլորտի ռազմավարությանը և ասպիրանտների անհատական կարիքներին:

ՈՒԺԵՂԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼԿՈՂՄԵՐ
<p>1. Բուհի ռազմավարական ծրագրում միջազգայնացման խնդիրն ընդգրկված է առանձին կետով:</p> <p>2. Ծրագրում նախատեսված միջազգայնացման գործընթացը համահունչ է հետազոտական կենտրոնի եւ բուհի հետազոտության միջազգայնացման ռազմավարությանը:</p> <p>3. Ծրագրում հաշվի են առնված արվեստի հետազոտության ոլորտում այժմյան համաշխարհային տենդենցները, մրցակցության ապահովման հնարավորությունները եւ չուսումնասիրված այն ոլորտներ-թեմաները, որոնց շրջանակներում բուհը կարող է միջազգային մակարդակով լրացնել մասնագետների պակասը:</p> <p>4. Նոր ուսումնական պլանում ներմուծված է «Մասնագիտական օտար լեզու» դասընթացը:</p> <p>5. Մշակվում են նախաձեռնություններ՝ միջազգային գործընկերների հետ համատեղ ծրագրեր կազմելու համար:</p>	<p>1. Միջազգայնացման գործընթաց ծավալելու եւ միջազգային հետազոտական ծրագրերին եւ միջոցառումներին մասնակցելու համար բուհի մասնագիտական ռեսուրսը չունի օտար լեզուների բավարար իմացություն՝ բացի ռուսերենից:</p> <p>2. Անգլերենով կամ այլ լեզվով ծրագրեր կամ դասընթացներ չեն անցկացվում (բացի իտալերեն լեզվով երկու մասնագիտական դասընթացից՝ արվեստաբանական բաժնում):</p> <p>3. Հետազոտական ուսանողները օտար լեզուներով գրեթե չեն տպագրվում:</p> <p>4. Հետազոտական մակարդակում համատեղ ծրագրեր չկան եւ ուսանողների փոխտեղաշարժ չի կազմակերպվում:</p>

<p>6. ԲՈՀԻ կողմից ներմուծվել է ասպիրանտական կրթության ընթացքում առնվազն մեկ օտար լեզվով հոդված հրատարակելու առաջարկը:</p> <p>7. Բուհում կան ռեսուրսներ՝ անգլերեն, ֆրանսերեն եւ իտալերեն լեզվով մասնագիտական դասընթացներ կազմակերպելու համար :</p> <p>8. Բուհի այժմյան ասպիրանտների կազմում լավ անգլերեն իմացողներ կան, ինչն ընդլայնում է միջազգայնացման գործընթացի հնարավորությունները:</p>	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<p>1. Օգտագործել Էրազմուս+-ի հնարավորությունները՝ ուսանողների եւ դասախոսների փոխադարձության ակտիվացման համար:</p>	
<p><i>Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները.</i></p> <p>1. Կազմակերպել օտար լեզվի դասընթացներ բուհի մասնագետների համար:</p> <p>2. Ընդլայնել միջազգային համագործակցությունները</p> <p>3. Փնտրել արտաքին միջոցներ եւ հնարավորություններ՝ բուհում օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելու համար:</p> <p>4. Միջազգային գրախոսվող գիտական հանդեսներում տպագրվելու համար ուսանողների համար նախատեսել կազմակերպված աջակցություն՝ կենտրոնի եւ գիտական մասի կողմից:</p> <p>5. Նոր ռազմավարական ծրագրում նախատեսել օտար լեզվով մասնագիտական կրթության համակարգի ներդրման</p>	

գործընթացը:

Առաջարկություններ տիրույթում խնդիրների բարելավման ուղղությամբ

Առաջարկվում է ներմուծել ատենախոսության սեղմագրի անգլերեն տարբերակի հրապարակման եւ համացանցում տեղադրման կարգ, որ հնարավորություն կտա միջազգայնորեն տարածել բուհերում կատարվող հետազոտության արդյունքները:

8. Գիտական աստիճանի շնորհում/ PhD Awarding

Բուհն ունի հետազոտական արդյունքների մշտադիտարկման և գնահատման հստակ մեխանիզմներ (վերաբերում է մասնագիտական խորհուրդներ ունեցող բուհերին):

Բուհն ունի ատենախոսության թեման հաստատելու, բայց չունի մասնագիտական խորհուրդ՝ ատենախոսության պաշտպանության կազմակերպման համար:

ՈՒՇԵՂԿՈՂՄԵՐ

ԹՈՒՅԼԿՈՂՄԵՐ

1. Նոր ծրագրով մշակված են թեզի ավարտագրի կատարմանն ու նախապաշտպանությանը վերաբերող պահանջները:

- Մշակված են ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների գծով թեզի ավարտագրի պատրաստման եւ պաշտպանության նոր պահանջներ:

2. Նոր ծրագրով տարեկան ատեստավորման ընթացքում ղեկավարը ասպիրանտների կատարած հետազոտության, առաջադիմության, համատեղ աշխատանքի մասին պետք է մեկ էջի սահմաններում գրավոր կարծիք ներկայացնի:

1. Բուհը չունի հետազոտության արդյունքների մշտադիտարկման եւ գնահատման հստակ սահմանված մեխանիզմներ:

- Բուհը չունի մասնագիտական խորհուրդ: Արվեստագիտության գծով ատենախոսության պաշտպանությունը եւ թեկնածուի գիտական աստիճանի շնորհումը ՀՀ-ում կենտրոնացած են մեկ իրավասու մարմնում, որն է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի մասնագիտական խորհուրդը:
- Խորհրդի կազմում ընդգրկված են ընդհանրապես

	<p>արվեստի բոլոր ոլորտների եւ բոլոր ժամանակաշրջանների մասնագետները, որոնք միշտ չէ, որ կոմպետենտ են՝ տվյալ ատենախոսությունը քննելու եւ գնահատելու համար:</p> <ul style="list-style-type: none"> • Արվեստագիտության գծով գիտական աստիճանի շնորհման կենտրոնացած հանգամանքը խոչընդոտում է ատենախոսության պաշտպանության նորմալ ընթացքը, իսկ որոշ դեպքերում՝ պարզապես չեղարկվում է ներկայացվող ատենախոսությունը: • Սա քարացած եւ անարդյունավետ կարգ է եւ պետք անպայման փոխվի, հատկապես՝ կատարողական եւ ստեղծագործական մասնագիտությունների գծով նոր տիպի ատենախոսությունների պաշտպանության կարգի ընդունումից հետո:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
Բուհում ձևավորել մասնագիտական խորհուրդ :	Վտանգ կա, որ արվեստագիտության գծով թեզի պաշտպանության համար գումարվող մասնագիտական հանձնաժողովի կարգը մնա անփոփոխ:
<i>Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները</i>	
<i>Առաջարկություններ տիրույթում խնդիրների բարելավման ուղղությամբ</i>	

9.Ներքինորակիապահովում/Internal Quality Assurance

Բուհն ունի որակի ներքին ապահովման համակարգ, որը նապատում է ասպիրանտական կրթության գործընթացների շարունակական բարելավմանը:

ՈՒԺԵՂԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼԿՈՂՄԵՐ
<ol style="list-style-type: none"> 1. Մշակվել է դասընթացի արդյունավետության գնահատման հարցաշար 2. Մշակվել է բուհում կատարվող հետազոտության գնահատման հարցաշար 	<ol style="list-style-type: none"> 1. Հետազոտության եւ ասպիրանտական կրթության համար բուհն առայժմ չունի որակի ներքին ապահովման համակարգ: 2. Մշակված հարցաշարերը դեռեւս չեն կիրառվել:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<p>Որպես հիմք օգտագործել Վերիտասի շրջանակներում ՈԱԿի մշակված որակի ապահովման չափանիշների եւ չափորոշիչների համակարգը՝ հետազոտության ոլորտի եւ ասպիրանտական կրթության ներքին համակարգի ձեւավորման համար:</p>	

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. Պետք է մշակվեն ասպիրանտական ասպիրանտական նոր ծրագրի որակի ապահովման ներքին համակարգ եւ չափանիշներ
2. Նախատեսվում է իրականացնել երկու տեսակի հարցում՝
 - Ա. բուհի հետազոտական ոլորտի համար, որում ընդգրկված կլինի ասպիրանտական ծրագիրը
 - Բ. Նոր ծրագրի ներդրումից հետո յուրաքանչյուր կիսամյակի ավարտին՝ դասընթացների արդյունավետության գնահատման համար

Առաջարկություններ տիրույթում խնդիրների բարելավման ուղղությամբ

